Funded by the European Union

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ-2024

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)

Հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը և պարտադիր չէ,
որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ, 2024

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC)՝ Իրավաբանների հայկական ասոցիացիան և Ագորա Սենթրլ Յուրոփ կազմակերպությունները համագործակցաբար իրականացնում են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնմանը, խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացները:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC) հանրային ծրագրերի և քաղաքականությունների մոնիտորինգին և վերլուծությանն ուղղված ոչ առևտրային նախաձեռնություն է: Կարևորելով հանրային միջոցներով հանրության համար իրականացվող ծրագրերի նպատակայնությունը, հասցեականությունը, իրականացման արդյունավետությունը և հանրության գոհունակությունը՝ Կենտրոնը փորձում է պրոֆեսիոնալ ներդրում ունենալ քաղաքականությունների մշակման և քննարկման գործընթացներում:

Ծրագրի շրջանակներում Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնն իրականացնում է բյուջետային գործընթացների վերաբերյալ քաղաքացիական հասարակության տեղեկացվածության մակարդակի բարելավման, բյուջետային գիտելիքի և բուջետային գործընթացին մասնակցելու կարողությունների ձևավորման, քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներին ՔՀԿ-ների արդյունավետ մասնակցության աջակցության միջոցառումներ, այդ թվում՝ բյուջետային տեղեկատվության պարզեցումներ և այլն:

Կրթության 2024 թվականի պարզեցված բյուջեն վերլուծական հրապարակում է՝ ուղղված հանրության լայն շրջանակի: Այն նպատակ ունի բարձրացնել հանրության իրազեկվածության մակարդակը, հիմքեր ստեղծել քաղաքացիական հասարակության և հանրային հատվածի արդյունավետ երկխոսության և տեղեկացված քննարկումների համար:

Տեղեկատվության հիմնական աղբյուրը պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներն են և պետական բյուջեի կատարման հաշվետվությունները, պաշտոնական այլ փաստաթղթեր և տվյալներ: Պետական բյուջեին վերաբերող 2024 թվականի համար բերվող տվյալները ծրագրային են, 2023-ի և նախորդող բոլոր տարիների տվյալները փաստացի են: Փաստաթղթում կրթության ոլորտի ծախսերը նույնականացվում են կրթության և գիտության ոլորտում իրականացվող բյուջետային ծրագրերի ծախսերի հանրագումարի հետ:

© ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ, 2024

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԲՏՃՄ	Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (STEM)
ԵՄ	Եվրոպական միություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՄՄԿ	Միջին մասնագիտական կրթություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՆԴԿ	Նախադպրոցական կրթության
ՆՄԿ	Նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթություն
ՆՄՄԿ	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՈՒՀ	Ուսումնական հաստատություն
ՔՀԿ	Քաղաքական հասարակության կազմակերպություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

06 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

09 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ

10 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԸ

11 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

12 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

13 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

14 ԿՐԹՈՒԹՅԱ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

- 2024 թվականի պետական բյուջեն հաստատվել է եկամուտների գծով 2,723.6 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 3,206.5 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով՝ 482.9 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի համապատասխանաբար 25.9, 30.5 և 4.6 տոկոսը:
- Կրթությանն ուղղված ծախսերը պետական բյուջեում ներկայացված են Կրթության և գիտության ծրագրերով, որոնք համակարգվում են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) կողմից:
- Կրթության զարգացումը կառավարության ծրագրի գերակայությունների շարքում է: Կրթության բոլոր մակարդակներում պետական քաղաքականությունն ուղղված է կրթության որակի բարելավմանը և մատչելիության բարձրացմանը:
- ՄԺԾԾ ժամանակահատվածում կշարունակվեն հանրակրթության ոլորտում մեկնարկած հիմնական բարեփոխումները, որոնց նպատակն է միջնակարգ կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ կրթության հավասար մատչելիության ապահովումը և համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը: Քաղաքականության թիրախում են՝ ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացումը և սոցիալական վիճակի բարելավումը, կրթության բովանդակային հենքի բարելավումը, հանրակրթության ուսումնանյութական բազայի արդիականացումը, որակյալ կրթության հավասար հասանելիության և ներառականության ընդլայնումը:
- Նախադպրոցական կրթության ոլորտում կշարունակվեն աշխատանքները նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածության մեծացման, նախադպրոցական հաստատությունների շենքային և գույքային հագեցվածությունը սահմանված պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:
- Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում կիրականացվեն մասնագիտական կրթության որակի բարելավման, եվրոպական կրթական տարածքին ինտեգրման, սոցիալապես խոցելի խավերի համար մասնագիտական կրթության մատչելիության և հասանելիության բարձրացման միջոցառումներ:
- Կարևորվում է սփյուռքում կրթական կարողությունների հզորացման և հայրենագիտական նյութերի բովանդակության բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
- Գիտության զարգացման ուղղությամբ թիրախավորվում են հետազոտությունների համար նպաստավոր միջավայրի, ինչպես նաև մարդկային և ֆիզիկական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պայմանների ստեղծումը, գիտական և գիտատեխնիկական բնագավառում միջպետական համաձայնագրերի, Եվրոպական շրջանակային ծրագրերին Հայաստանի մասնակցության խթանումը, գիտահետազոտություններին ուղղված ծրագրերի, աշխարհի լավագույն գիտական կենտրոններում վերապատրաստված գիտաշխատողների առկայությունը:

- 2024 թվականին կրթության ծրագրերին կուղղվի 317.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է 118.6 մլրդ դրամով կամ 59.7 տոկոսով:
- ՀՆԱ-ի նկատմամբ կրթության ծրագրերին ուղղված ծախսերի կշիռը 2024-ին կկազմի 3 տոկոս՝ 2019-2023թթ. 2.2 տոկոս միջին մակարդակի պայմաններում, իսկ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ՝ 9.9 տոկոս՝ նախորդող 5 տարիների 8.1 տոկոս միջին մակարդակի պայմաններում:
- Կրթության ոլորտի ֆինանսավորման ծավալները 2020-2023թթ. դրսևորել են կայուն բարձր աճի տեմպեր, իսկ 2024-ի աճը աննախադեպ բարձր է: 2020-2024թթ. կրթության ծրագրերի ֆինանսավորման միջին տարեկան աճը կազմում է 19.6 տոկոս և գերազանցում է նույն ժամանակահատվածում պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը 4.9 տոկոսային կետով:
- Կրթության ոլորտում պետական քաղաքականությունը 2024-ին կիրականացվի 14 բյուջետային ծրագրերի միջոցով:
- Կրթական ծրագրերի շարքում ֆինանսավորման ծավալով առաջատարը «Հանրակրթության ծրագիրն» է, որի բյուջեն կազմում է կրթական ծրագրերի բյուջեի 62.4 տոկոսը կամ ավելի քան 121.9 մլրդ դրամ:
- Հաջորդում է «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագիրը՝ 47.1 տոկոս մասնաբաժնով և ավելի քան 92 մլրդ դրամ ֆինանսավորմամբ:
- Երրորդ դիրքում «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագիրն է՝ համապատասխանաբար 18.3 տոկոս կշռով և 35.8 մլրդ դրամ ֆինանսավորմամբ:
- Նկատենք, որ 2024-ին մեկնարկել են երկու նոր կրթական ծրագրեր, դրանք են «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» և «Նախադպրոցական կրթություն» ծրագրերը: Ի լրումն՝ ՏԿԵՆ-ից ԿԳՄՍՆ է տեղափոխվել «Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացում» ծրագիրը:
- 2024-ին ոլորտի գրեթե բոլոր ծրագրերի բյուջետային ֆինանսավորման ծավալները կաճեն, թերևս բացառություն են «Ապահով դպրոց» և «Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացում» ծրագրերը:
- Ծրագրային ֆինանսավորման ծավալների աճի իմաստով առաջին երեք դիրքերում են «Կրթության որակի ապահովում», «Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» և «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» ծրագրերը՝ համապատասխանաբար 72.8; 57.8 և 38.5 տոկոս աճի տեմպերով:
- Համաձայն բյուջետային ֆինանսավորման ծավալների բացարձակ աճերի՝ ոլորտում գերակա ուղղություններ են հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնումը, կառուցումը և բարելավումները, ինչպես նաև գիտության և գիտահետազոտության զարգացումը: Այս ծրագրային ուղղությունները միասին կապահովեն ոլորտի ֆինանսավորման աճի մոտ 93.9 տոկոսը:
- «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» և «Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացում» ծրագրերի շրջանակներում դպրոցաշինությանը կուղղվի 102.3 մլրդ դրամ:

- Արդյունքում հանրապետությունում 2024-ին նշված երկու բյուջետային ծրագրերի շրջանակներում կիրականացվեն 117+30 դպրոցի և 74 կրթահամալիրի կառուցման աշխատանքներ:
- Բավականաչափ մեծ ռեսուրսներ կուղղվեն նաև դպրոցների և մանկապարտեզների շենքերի վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը: Մասնավորապես՝ մանկապարտեզների հիմնանորոգում-ներին և վերակառուցումներին կուղղվի ավելի քան 13,4 մլրդ դրամ, իսկ դպրոցներին՝ 519,4 մլն դրամ:
- Կտրուկ կաճի գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինման և համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծման նպատակով ֆինանսավորումը՝ հասնելով 4.2 մլրդ դրամի: Միջոցներ կուղղվեն նաև գիտական կենտրոնների վերանորոգմանը և «Ակադեմիական քաղաք» նախագծի շրջանակներում առաջացած ծախսերին՝ մոտ 940.0 մլն դրամ:
- Կարևորվում են գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացումը: Կաճեն թե՛ գիտական և գիտատեխնիկական պայմանագրային հետազոտություններին և թե՛ նպատակային-ծրագրային հետազոտություններին ուղղվող ռեսուսները՝ կազմելով համապատասխանաբար 9.3 մլրդ և 152.9 մլն դրամ:
- Լրացուցիչ միջոցներ կուղղվեն նաև ՆՄՄԿ ՈՒՀ-ների մանկավարժական աշխատողների ատեստավորման համակարգի ներդրմանը և հավելավճարների տրամադրմանը, ինչպես նաև հանրակրթական դպրոցների՝ ատեստավորման միջոցով տարակարգի որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարների տրամադրմանը:
- Լրացուցիչ միջոցներ են նախատեսված պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով ՀՀ բուհերում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով առկա ուսուցմամբ սովորողներին տրվող պետական կրթաթոշակի չափերի ավելացման համար:
- ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի) դասավանդող ուսուցիչների համար վարձատրության բարձրացմանն ուղղվող ռեսուրսները կաճեն ավելի քան 2.8 անգամ՝ կազմելով 1.7 մլրդ դրամ:
- 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում նախնական և միջին մասնագիտական կրթություն (ՆՄՄԿ) ստացող ուսանողների ուսման վարձի փոխհատուցումներին կուղղվի 462.2 մլն դրամ, իսկ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստացողներին կուղղվի 440.2 մլն դրամ: Արդյունքում, ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում կստանան ՆՄՄԿ ստացող 2,524 և բարձրագույն կրթություն ստացող 2,190 Լեռնայն Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանող:
- Կմեկնարկի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչներին օժանդակության միջոցառումը, որի շրջանակներում 309 մլն դրամ կուղղվի ՀՀ մարզերի դպրոցներում աշխատող 500 ուսուցչի լրավճարների տրամադրմանը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ

Կրթության ոլորտի բյուջեն և դրա տարեկան աճը, 2019-2024թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Կրթության ոլորտի բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում և ՀՆԱ-ում, 2019-2024թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

- Սույն պարզեցված ուղեցույցում կրթության ոլորտի բյուջեն նույնականացվել է կրթության և գիտության ոլորտում իրականացվող բոլոր բյուջետային ծրագրերի ծախսերի հանրագումարի հետ:
- Կրթության ոլորտի բոլոր ծրագրերը, բացառությամբ տարբեր գերատեսչությունների կողմից իրականացվող մասնագիտական վերապատրաստումների և կարողությունների բարելավման ներոլորտային/գերատեսչական ծրագրերի, իրականացվում են ՀՀ ԿԳՄՍՆ կողմից:

- 2024 թվականին կրթության ոլորտում իրականացվող ծրագրերին կուղղվի 317.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է ավելի քան 118.6 մլրդ դրամով կամ 59.7 տոկոսով:
- 2024-ին կրթության ֆինանսավորման ծավալները կգերազանցեն 2019-ի մակարդակը մոտ 2.3 անգամ:
- Պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ կրթության ոլորտի բյուջետային ծախսերի կշիռը 2024-ին կկազմի 9.9 տոկոս՝ 2023-ի՝ 7.8 տոկոս մակարդակի և 2019-2023թթ.՝ 8.1 տոկոս միջին մակարդակի պայմաններում: ՀՆԱ-ի նկատմամբ կրթության ծախսերը 2024-ին կկազմեն 3.0 տոկոս՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 0.9 տոկոսային կետով:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԸ

- Կրթության ոլորտի ֆինանսավորման ծավալները 2020-2023թթ. դրսևորել են կայուն բարձր աճի տեմպեր: 2020-2024թթ. կրթության ծրագրերի ֆինանսավորման միջին տարեկան աճը կազմում է 19.6 տոկոս և գերազանցում է նույն ժամանակահատվածում պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը 4.9 տոկոսային կետով:

- 2024-ին պլանավորված աճն անհամեմատ բարձր է՝ 59.7 տոկոս:

- Արդյունքում ընդամենը բյուջետային ծախսերում կրթության ոլորտի կշիռը կազմում է 9 տոկոս և երրորդն է՝ սոցիալական պաշտպանություն և պաշտպանություն ոլորտներից հետո:

Առանձին ոլորտների բյուջետային ծախսերի կշիռը 2024թ., գործառական դասակարգում, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Պետական բյուջեի և կրթության բյուջեի ծախսերի աճի դինամիկան, 2020-2024թթ., ծրագրային դասակարգում, տոկոս



Առանձին ոլորտների բյուջետային ծախսերի աճը 2020-2024թ., գործառական դասակարգում, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Կրթության ոլորտում պետական քաղաքականությունը 2024-ին կիրականացվի 14 բյուջետային ծրագրերի միջոցով:

ԴԱՍԻՉ	ԾՐԱԳԻՐ	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024 տոկոս	2024/2023 տոկոս
	ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐ	198,722.30	317,271.70	100.0	59.7
1146	Հանրակրթության ծրագիր	115,332.5	121,906.0	62.4	5.7
1045	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	10,955.8	15,176.1	7.8	38.5
1111	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	12,725.4	14,642.3	7.5	15.1
1148	Արտադպրոցական դաստիարակության ծրագիր	4,189.3	4,268.6	2.2	1.9
1183	Ապահով դպրոց	7,667.5	1,512.3	0.8	-80.3
1189	Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր	12,210.7	10,286.2	5.3	-15.8
1192	Կրթության որակի ապահովում	6,975.0	12,050.8	6.2	72.8
1193	Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում	3,195.3	3,767.7	1.9	17.9
1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	22,664.8	35,776.0	18.3	57.8
1130	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	1,847.4	1,964.8	1.0	6.4
1215	Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային համագործակցության ընդլայնում, սփյուռքում և օտարերկրյա պետություններում հայկական կրթական կարողությունների հզորացում	366.6	403.1	0.2	10.0
1227	Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում	592.0	736.3	0.4	24.4
1236	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	-	92,033.9	47.1	-
1238	Նախադպրոցական կրթություն	-	2,747.6	1.4	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

- Կրթական ծրագրերի շարքում ֆինանսավորման ծավալով առաջատարը «Հանրակրթության ծրագիրն (1046)» է, որի բյուջեն կազմում է կրթական ծրագրերի բյուջեի 62.4 տոկոսը կամ ավելի քան 121.9 մլրդ դրամ:
- Հաջորդում է «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում (1236)» ծրագիրը՝ 47.1 տոկոս մասնաբաժնով և ավելի քան 92 մլրդ դրամ ֆինանսավորման ծավալով:
- Երրորդ դիրքում «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների (1162)» ծրագիրն է՝ համապատասխանաբար 18.3 տոկոս կշռով և 35.8 մլրդ դրամ ֆինանսավորմամբ:
- 2024-ին ԿԳՄՍՆ կողմից կմեկնարկվեն կրթական երկու նոր ծրագրեր, դրանք են «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» և «Նախադպրոցական կրթություն» ծրագրերը:
- ՏԿԵՆ «Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացում» ծրագիրն այսուհետ կհամակարգվի ԿԳՄՍՆ կողմից:



*Դասիչներն ըստ ծրագրերի անվանումների տե՛ս էջ 10-ում

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

- 2024-ին ոլորտին ուղղվող ռեսուրների աճի գերակշիռ մասը կուղղվի հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնման, կառուցման և բարելավումների իրականացմանը, ինչպես նաև գիտության և գիտահետազոտության զարգացմանը: Այս երկու ծրագրերը միասին կապահովեն ոլորտին ուղղված ֆինանսավորման ծավալների աճի մոտ 93.9 տոկոսը:
- «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրին կուղղվի 92.0 մլրդ դրամ, իսկ «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի» ֆինանսավորման աճը 2024-ին կկազմի ավելի քան 13.1 մլրդ դրամ:
- Աճի բացարձակ մեծությամբ հաջորդ դիրքում է «Հանրակրթության ծրագիրը», որն ապահովում է ոլորտի բյուջեի աճի 5.9 տոկոսը: 2024-ին հանրակրթության ծրագրի բյուջեն կաճի մոտ 6.6 մլրդ դրամով և կկազմի 121.9 մլրդ դրամ:
- Ծրագրային ֆինանսավորման աճի տեմպերով առաջին երեք դիրքերում են «Կրթության որակի ապահովում», «Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» և «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» ծրագրերը՝ համապատասխանաբար 72.8; 57.8 և 38.5 տոկոս աճերով:

Կրթության ոլորտի բյուջեի աճի կառուցվածքն ըստ ծրագրերի, 2022թ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

1146 ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

121.9 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿ

- **Ապահովել անվճար և որակյալ հանրակրթություն:**

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

- **Մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմամբ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիրակված, պատշաճ վարքով և վարվելակերպով անձի ձևավորում:**

Երեխաների մասնաբաժինը հիմնական դպրոցն ավարտելիս, ովքեր ձեռք են բերել առնվազն գիտելիքների նվազագույն մակարդակ (I) ընթերցանությունից և (II) մաթեմատիկայից



- Հանրակրթության ծրագրի բյուջեն 2024 թվականին կաճի 5.7 տոկոսով և կկազմի ավելի քան 121.9 մլրդ դրամ:
- Ծրագրի բյուջեի գերակշիռ մասը՝ 92.0 տոկոսը, կուղղվի հանրակրթության տարբեր ծրագրերի իրականացման ապահովմանը: Մասնավորապես՝ 105.9 մլրդ դրամ կամ ծրագրի բյուջեի 87.7 տոկոսը կուղղվի ընդհանուր հանրակրթության ապահովմանը, 1.2 մլրդ դրամ կամ բյուջեի 1.0 տոկոսը՝ հատուկ հանրակրթության, իսկ 4.0 մլրդ դրամ, կամ 3.3 տոկոսը՝ մասնագիտացված հանրակրթության ապահովմանը:
- Ծախսերը նախատեսված են 1,335 հանրակրթական դպրոցների 20.1 հազար դասարաններում ընդգրկված 403,722 աշակերտի ուսուցման, ինչպես նաև հատուկ և մասնագիտացված հանրակրթության մեջ ընդգրկված՝ համապատասխանաբար 542 և 3,911 սովորողների կրթության համար:
- Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման, հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցման համար: Ծախսեր են նախատեսվել նաև սովորողների միջազգային գնահատման ծրագրին (PISA) մասնակցության, պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏԾՄ (STEM) ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի), գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների, ՀՀ Սյունիքի մարզում բազմահամակազմ դասարաններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարների տրամադրման, 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության իրականացման համար:

- Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովմանն ուղղվող ֆինանսական ռեսուրսները 2024-ին կաճեն գրեթե 2 անգամ՝ կազմելով 2.3 մլրդ դրամ:
- Ի լրումն, սոցիալական աջակցություն ստացող ՀՀ սահմանամերձ համայնքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցմանը կուղղվի ևս 33.6 մլն դրամ, իսկ կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովմանը՝ 23.9 մլն դրամ:
- Դպրոցականների օլիմպիադաների անցկացմանն ուղղվող ռեսուուսները չեն աճի և կկազմեն 58 մլն դրամ: Միջազգային առարկայական օլիմպիադաներում ակնկալվում է ունենալ 15 մեդալակիր:
- Սովորողների միջազգային գնահատման ծրագրին /PISA/ մասնակցության ապահովման նպատակով կծախսվի 116.7 մլն դրամ:
- Դպրոցներում ԲՏՃՄ կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացմանը կուղղվի 858.6 մլն դրամ: Միջոցառմանը մասնակից ինժեներական լաբորատորիաների թիվը կհասնի 630-ի:

ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ	**115,332.5**	**121,906.0**	**5.7**
Տարրական ընդհանուր հանրակրթություն	37,398.1	38,029.9	1.7
Հիմնական ընդհանուր հանրակրթություն	44,650.5	46,962.1	5.2
Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն	18,345.7	21,941.4	19.6
Տարրական հատուկ հանրակրթություն	327.4	370.3	13.1
Հիմնական հատուկ հանրակրթություն	535.5	503.6	-6.0
Միջնակարգ հատուկ հանրակրթություն	359.9	355.5	-1.2
Տարրական մասնագիտացված հանրակրթություն	228.3	216.0	-5.4
Հիմնական մասնագիտացված հանրակրթություն	1,655.3	1,670.7	0.9
Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն	1,746.0	2,149.7	23.1
Նախադպրոցական կրթություն	786.4	-	-100.0
Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում	126.4	126.4	0.0
Դպրոցականների օլիմպիադաների անցկացում	56.0	58.0	3.6
Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում	1,168.2	2,310.3	97.8
Կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովում	31.9	23.9	-25.2
Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում	858.6	858.6	0.0
«Ազգային երգ ու պար»առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հ հաստատություններում	7.7	-	-100.0
Միջնակարգ հանրակրթություն երեկոյան դպրոցում (Շիրակի մարզ)	14.6	-	-100.0
Գնահատման և թեստավորման ծառայություններ	601.8	669.8	11.3
Մասնակցություն սովորողների միջազգային գնահատման ծրագրին /PISA/	102.4	116.7	14.0
Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի հավակնորդների զարգացման ծրագրերի փորձաքննության իրականացում	15.0	15.0	0.0
Տարակարգի հանրապետական հանձնաժողովի աշխատանքներում ընդգրկված փորձագետների ֆինանսավորում (համաձայն ՀՀ կառավարության 2022թ. սեպտեմբերի 29-ի N 1509-Ն որոշման)	4.2	-	-100.0

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի) դասավանդող ուսուցիչների համար վարձատրության բարձրացված չափաքանակին ուղղվող ռեսուրսները կաճեն ավելի քան 2.8 անգամ՝ կազմելով 1.7 մլրդ դրամ:
- Ատեստավորման միջոցով տարակարգի որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարի տրամադրմանը կուղղվի 368.1 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 43 տոկոսով: Ատեստավորման միջոցով տարակարգի որակավորում ստացած ուսուցիչների թվաքանակը կհասնի 2,285 ուսուցչի:
- Ավելի քան հինգ ամգամ կաճեն ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչների հավելավճարի սահմանմանն ուղղված ռեսուրսները:
- 27.1 մլն դրամ կուղղվի ՀՀ Սյունիքի մարզում բազմահամակազմ դասարաններում դասավանդող ուսուցիչներին՝ հավելավճարի սահմանման նպատակով:

Աղյուսակի շարունակություն

ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ	**115,332.5**	**121,906.0**	**5.7**
Նորարական լուծումներ՝ ԲՏՃՄ ոլորտում կրթության որակի բարձրացում	4.5	-	-100.0
Փոխհատուցում այլ բնակավայրում աշխատող պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին	7.5	6.3	-16.9
Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	521.2	523.3	0.4
Սոցիալական աջակցություն ստացող ՀՀ սահմանամերձ համայնքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	29.7	33.6	13.1
Ատեստավորման միջոցով տարակարգի որակավորում ստացած ուսուցիչներին համապատասխան հավելավճարի տրամադրման ապահովում	257.4	368.1	43.0
Հանրակրթական դպրոցների աշակերտներին անվանական կրթաթոշակի տրամադրում	42.0	42.5	1.1
«Մոդուլային» տիպի մանկապարտեզների շենքային ապահովում	3,553.4	-	-100.0
«Տարվա լավագույնները» միջոցառման շրջանակում հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին պարգևատրում	11.0	11.0	0.0
Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում	783.2	-	-100.0
ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի) դասավանդող ուսուցիչների համար վարձատրության բարձրացված հստակ չափաքանակի սահմանում	615.0	1,745.7	183.9
ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում	468.2	2,461.5	425.8
ՀՀ Սյունիքի մարզում բազմահամակազմ դասարաններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում	-	27.1	-
2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիր	-	309.0	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- «Տարվա լավագույնները» միջոցառման շրջանակում հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին պարգևատրումներին կուղղվի 11 մլն դրամ:
- Կմեկնարկի 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության միջոցառումը, որին կուղղվի 309 մլն դրամ: Ռեսուրսները կուղղվեն ՀՀ մարզերի դպրոցներում 500 ուսուցչի լրավճարի տրամադրմանը՝ ամսական միջինում 51,500 դրամ:
- Հանրակրթական դպրոցների մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցումներին կուղղվի 523.3 մլն դրամ:
- Նկատենք, որ ծրագրում մինչև 2023-ը առկա նախադպրոցական կրթությանն ապահմանն ուղղված միջոցառումները այլևս հանրակրթության ծրագրից առանձնացվել են և ձևավորել առանձին բյուջետային ծրագիր՝ «1238-Նախադպրոցական կրթություն» ծրագիրը (մանրամասները ներկայացվա են 1238 ծրագրային բաժնում):





1148 ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

4.3 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿ

- **Նպաստել հանրակրթական ուսուցման համակարգում ընդգրկված երեխաների ֆիզիկական, հոգևոր և գեղագիտական զարգացմանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:**

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

- **Ստեղծել պայմաններ սովորողների ազատ ժամանցի կազմակերպան միջոցով նրանց հետաքրքրությունների բացահայտման, ձևավորման և զարգացման համար:**

- Արտադպրոցական դաստիարակություն ծրագրի բյուջեն 2024 թվականին կաճի 1.9 տոկոսով և կկազմի մոտ 4.3 մլրդ դրամ:
- Ծրագրի բյուջեի 65.8 տոկոսը կամ ավելի քան 2.8 մլրդ դրամ կուղղվի արտադպրոցական դաստիարակության տարբեր ծրագրերի իրականացմանը պետական հաստատությունների կողմից:
- Եվս 768.9 մլն դրամ կուղղվի հասարակական կառույցների կողմից իրականացվող արտադպրոցական դաստիարակության ծրագրերին:

Արտադպրոցական դաստիարակության ծրագրերում 6-18 տարեկան երեխաների ընդգրկվածության մակարդակ



Արտադպրոցական դաստիարակության ծրագրերում գյուղական, մասնավորապես՝ սահմանապահ բնակավայրերում 6-18 տարեկան երեխաների ընդգրկվածության մակարդակ



- Ծրագրի կարևոր ծախսային ուղղություններից է դպրոցականների ամառային հանգստի կազմակերպումը, որին կուղղվի ծրագրի բյուջեի 9.2 տոկոսը կամ 390.8 մլն դրամ: Այս միջոցներով կապահովվի 3,200 դպրոցականների ամառային հանգիստը:
- ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների ռազմամարզական ճամբարի կազմակերպմանն ուղղվող ռեսուրսները կաճեն ավելի քան 2 անգամ՝ կազմելով 108 մլն դրամ, որով կապահովվի 11-րդ դասարանների 1,029 աշակերտների ռազմամարզական ճամբարի կազմակերպումը:
- Կտրուկ՝ մոտ 5 անգամ կաճեն արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների որակի բարձրացման կամավոր ատեստավորման նոր համակարգի ներդրմանն ուղղված ռեսուրսները: Ատեստավորման արդյունքում հավելավճար ստացած արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների թվաքանակը կկազմի 179:
- Մարզիչ-մանկավարժների վերապատրաստումներին կուղղվի 8.1 մլն դրամ:
- ՀՀ դպրոցականների աշխարհի, Եվրոպայի և համաշխարհային գիմնազիադայի մասնակցության և ՀՀ տարածքում կազմակերպման ապահովման ծախսերը կկազմեն 29.9 մլն դրամ:
- 2024-ից կդադարեն ֆինանսավորվել «Քո արվեստը դպրոցում», Դասական երաժշտություն «Դաս Ա» և Ուսումնամարզական գործընթացի իրականացում մարզադպրոցներում միջոցառումները:

ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ	**4,189.3**	**4,268.6**	**1.9**
Արտադպրոցական դաստիարակություն	2,708.6	2,807.3	3.6
Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում և տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	393.9	390.8	-0.8
Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից	797.5	768.9	-3.6
Մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպում	-	8.1	-
«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում	6.8	6.8	-
«Քո արվեստը դպրոցում»	70.6	-	-
Դասական երաժշտություն «Դաս Ա»	32.5	-	-
ՀՀ դպրոցականների աշխարհի, Եվրոպայի և համաշխարհային գիմնազիադայի մասնակցության և ՀՀ տարածքում կազմակերպման ապահովում	29.6	29.9	1.1
Դպրոցը գիտական միջավայրում	15.7	16.0	2.5
ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների ռազմամարզական ճամբարի կազմակերպում	50.7	108.0	112.9
Ուսումնամարզական գործընթացի իրականացում մարզադպրոցներում	55.9	-	-
Կամավոր ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ուղղված արտադպրոցական ուսումնականհաստատությունների մանկավարժական աշխատողներիորակի բարձրացմանը	26.9	132.9	394.7
Արտադպրոցական դաստիարակություն իրականացնող կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում	0.7	-	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

179

Կամավոր ատեստավորման արդյունքում հավելավճար ստացած արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների թվաքանակ

140

Կամավոր ատեստավորման արդյունքում ընթացիկ տարում ատեստավորված մանկավարժների թվաքանակ

139

Կամավոր ատեստավորման արդյունքում ընթացիկ տարում հավելավճար ստացած մանկավարժների թվաքանակ

1,029

Ռազմամարզական ճամբարի մասնակից ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների թվաքանակ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՍԱՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ



3,200

Ճամբարներում ամառային հանգիստ անցկացնող երեխաների թվաքանակ

1238 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2.7 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿ	ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
• Ապահովել հասանելի և որակյալ նախադպրոցական կրթություն:	• Բոլոր երեխաներն ունեն հավասար հասանելիություն նախադպրոցական կրթության և զարգացման որակյալ ծառայություններին:

- 2024-ից մեկնարկել է «Նախադպրոցական կրթություն» ծրագիրը, որին կուղղվի 2.7 մլրդ դրամ:
- Ծրագրի հիմքում «Հանրակրթության ծրագրից» առանձնացված նախադպրոցական կրթության կազմակերպման գծով միջոցառումներն են:
- Ծրագրի բյուջեի մեծ մասը՝ 66.9 տոկոսը կուղղվի սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության (ՆԴԿ) ապահովմանը:
- Այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող թվով 360 երեխաների, անապահովության սահմանային 28 միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող թվով 3,385 երեխաների և զինծառայողների թվով 1,677 երեխաների ՆԴԿ ապահովմանը:
- Նախադպրոցական կրթության մակարդակում տարրական դպրոցին նախապատրաստման շահառու 5-6 տարեկան երեխաների թիվը 7,585 է:

3-5 տարեկան երեխաների համախառն ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում

Նախնական մակարդակ	2024
64.3%	85%

ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	2024 մլն դրամ	2024 կշիռ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	2,747.6	100.0
Նախադպրոցական կրթության հասանելիության և որակի ապահովում	831.7	30.3
Նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստում	36.0	1.3
Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում	1,839.2	66.9
Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով	40.7	1.5

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

1193 ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ

3.8 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿ

- **Յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովում՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան և անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցով:**

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

- **Խոցելի խմբերի երեխաների ընդգրկվածության ապահովում հանրակրթական հաստատություններում:**

- Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում ծրագրի բյուջեն 2024 թվականին կաճի 17.9 տոկոսով և կկազմի մոտ 3.8 մլրդ դրամ:
- Ծրագրի բյուջեի ավելի քան 97.8 տոկոսը կուղղվի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումների իրականացմանը:
- Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրմանը կուղղվի 82 մլն դրամ:



Հանրակրթական դպրոց հաճախող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տեսակարար կշիռը կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների ընդհանուր թվաքանակի մեջ

ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ	**3,195**	**3,768**	**17.9**
Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ	2,973	3,686	24.0
Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում	81	82	1.4
Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում	127	-	-
ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Ներառական կրթության համակարգի ներդրում» դրամաշնորհային ծրագիր	14	-	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ



Մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոնների թիվ

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպում» ծրագրում ընդգրկված դպրոցների թիվ

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպում» ծրագրում ընդգրկված ՆՄՄԿ ՈՒՀ-ների թիվ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ



ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ



Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման համար գնահատվող երեխաների թվաքանակ

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստացող երեխաների թվաքանակ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման համար գնահատվող ՆՄՄԿ ՈՒՀ ուսանողների թվաքանակ



Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների թվաքանակ

1236 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ, ԿԱՌՈՒՑՈՒՄ, ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

92.0 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿ

- **Առնվազն 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրերի իրականացում ՀՀ պետական բյուջեի միջոցների շրջանակներում:**

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

- **Կրթական միջավայրի բարելավում:**

- Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում ծրագիրը մեկնարկել է 2024 թվականին: Այն համախմբում է մինչ այդ տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում իրականացված համապատասխան միջոցառումները: Ծրագրի իրականացմանը 2024 թվականին կուղղվի ավելի քան 92.0 մլրդ դրամ:
- Ծրագրի բյուջեի 46.7 տոկոսը կամ մոտ 43.0 մլրդ դրամ կուղղվի հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցմանը: Ծախսերի հաջորդ մեծ ուղղությունը կրթահամալիրների կառուցումն է, որոնց կուղղվի ծրագրի բյուջեի 21.7 տոկոսը կամ մոտ 20.0 մլրդ դրամ: Մանկապարտեզների նոր շենքերի կառուցմանը կուղղվի 6.3 մլրդ դրամ:

13 — **Նախադպրոցական հաստատությունների քանակ, որոնց շինարարական աշխատանքները կավարտվեն 2024 թվականին**

110 — **Բնակավայրերի թիվ, որոնցում ՀՀ-ում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի շրջանակներում 2026թ. կրթական ծառայությունները կմատուցվեն նոր կառուցված կամ վերակառուցված կրթական հաստատություններում**

ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	2024 մլն դրամ	2024 կշիռ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ, ԿԱՌՈՒՑՈՒՄ, ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	**92,033.9**	**100.0**
Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում	6,326.1	6.9
Մանկապարտեզների շենքերի վերակառուցում, հիմնանորոգում	13,445.1	14.6
Հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցում	42,965.3	46.7
Հանրակրթական դպրոցների շենքերի վերակառուցում, հիմնանորոգում	519.4	0.6
Կրթահամալիրների կառուցում	19,964.3	21.7
Հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների գույքով և տեխնիկայով ապահովում	8,813.8	9.6

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ



ԴՊՐՈՑՆԵՐ ԹՎԱՔԱՆԱԿ

ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ



- Արդյունքում ծրագրի շրջանակներում հանրապետությունում **2024**-ին կիրականացվեն **117** դպրոցի և **74** կրթահամալիրի կառուցման աշխատանքներ: Կվերակառուցվեն թվով **2** դպրոցներ և թվով **7** դպրոց ամբողջական տեսքի կբերվի՝ մարզադահլիճի ու հանդիսությունների դահլիճի մասնաշենքերի կառուցման և վերանորոգման արդյունքում:
- Ծրագրի շրջանակներում կառուցվող մանկապարտեզների թվաքանակը **18** է: Պետք է նկատենք, սակայն, որ սրանք պետական բյուջետային ռեսուրսներով կառուցվող մանկապարտեզների միայն մի մասն են, քանի որ դրանց մեծ մասը կառուցվում է ՀՀ ՏԿԵՆ ծրագրերի շրջանակներում կառավարության կողմից համայնքներին տրամադրվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

“

- Բավականաչափ մեծ ռեսուրսներ կուղղվեն նաև դպրոցների և մանկապարտեզների շենքերի վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով: Մասնավորապես մանկապարտեզների հիմնանորոգումներին և վերակառուցումներին կուղղվի ավելի քան **13.4** մլրդ դրամ, իսկ դպրոցներին՝ **519.4** մլն դրամ:
- Նկատենք նաև, որ ևս **4** դպրոցի հիմնանորոգման և **3** դպրոցի մարզադահլիճի կառուցման աշխատանքներ կիրականացվեն «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում:
- Ավելի քան **8.8** մլրդ դրամ բյուջետային միջոցներ էլ կուղղվեն հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների գույքով և տեխնիկայով ապահովմանը: Թվով **361** դպրոցներ կապահովվեն անհրաժեշտ գույքով և տեխնիկայով:

ԳՈՒՅՔՈՎ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅՈՎ ԱՊԱՀՈՎՎՈՂ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ



1189 ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

10.3 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿ	ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
• Նպաստել երկրի սեյսմակայունու-թյան ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը:	• Դպրոցական շենքերի սեյսմակայունության մակարդակի բարձրացում:

ՄՍԿ երկրաշարժի ուժգնության սանդղակի 9 (IX) նշանագծի սեյսմակայունության չափանիշներին համապատասխանող դպրոցական շենքերում սովորող աշակերտների տոկոսը



Կառավարության սեյսմիկ անվտանգության չափանիշներին համապատասխան վերակառուցված դպրոցների թիվը, էներգետիկ արդյունավետության պահանջներին համապատասխանող պայմաններով



- Ծրագրի նպատակն է՝ նպաստել երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը: Ծրագիրն իրականացվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) ֆինանսական աջակցությամբ: Մինչև 2024 թվականը ծրագիրը համակարգվում էր ՀՀ ՏԿԵՆ կողմից:
- Ծրագրի իրականացմանը 2024 թվականին կուղղվի մոտ 10.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ կնվազի 15.8 տոկոսով:
- 2024-ին կշարունակվի 30 դպրոցի կառուցման աշխատանքները և կավարտվի թվով 7 դպրոցի կառուցումը:

ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ	**12,211**	**10,286**	**-15.8**
ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի կառավարում	121	225	85.1
ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ	12,089	4,737	-60.8
ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ	-	5,325	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

1045 ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

15.2 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿ	ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
• **Աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության որակավորում ունեցող մասնագետների պատրաստում, կրթության մատչելիության ապահովում:**	• **Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության գրավչության բարձրացում, մատչելի և մրցունակ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ապահովում:**

- Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական (ՆՄՄԿ) կրթությանն ուղղվող ռեսուրսները 2024-ին կաճեն 38.5 տոկոսով և կկազմեն մոտ 15.2 մլրդ դրամ:
- Ծրագրի բյուջեի 67.89 տոկոսը կուղղվի ՆՄՄԿ գծով ուսանողական նպաստների տրամադրման ծախսերին: Այս ծախսերի աճը 2024-ին կկազմի 12.6 տոկոս կամ 1.1 մլրդ դրամ և կապահովի ծրագրի բյուջեի աճի մոտ 26.5 տոկոսը:
- Լրացուցիչ միջոցներ են նախատեսվել ՀՀ կառավարության կողմից հաստատված առաջնահերթ և կարևոր ոլորտների մասնագիտությունների ցանկով հիմնական կրթության հիմքով ընդունված ուսանողներին տրվող կրթաթոշակների չափերի ավելացման նպատակով: 2024-ին ՆՄՄԿ ստացող ուսանողների կրթաթոշակներին կուղղվի 1.8 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է ավելի քան 2 անգամ:

Նախնական մակարդակ	ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	2024
57.5%	ՆՄՄԿ համակարգում ընդունվածների մասնաբաժինը՝ մասնագիտական կրթության (ՆՄ և բարձրագույն) համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների թվում	58.8%
27%	ՆՄՄԿ համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների թիվը՝ հիմնական և միջնակարգ դպրոցների շրջանավարտների թվում	59.5%
21.7%	Ուսումնառած մասնագիտության կամ նույն ոլորտին առնչվող մասնագիտության գծով ուսումնառությունը շարունակած ուսանողների մասնաբաժինը, տոկոս	21.8%
53.8%	Ուսումնառության ավարտից հետո 6 ամսվա ընթացքում զբաղվածություն ունեցող շրջանավարտների մասնաբաժինը (ներառված չեն ԲՈՒՀ տեղափոխված/ ընդունված, բանակ զորակոչված, արտերկիր մեկնած, ոչ իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտները, աշխատանք չփնտրողներ)	59%
14	Աշխատանքի վրա հիմնված, դուալ ուսուցման փորձնական ծրագրեր իրականացնող ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների քանակը	16

- 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում ՆՄՄԿ ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցումներին կուղղվի 462.2 մլն դրամ՝ նախորդ տարվա 120.6 մլն դրամի դիմաց:
- Կտրուկ կաճեն ՆՄՄԿ ՈՒՀ-ների շենքային պայմանների բարելավումներին և շենքերի կառուցմանն ուղղվող ռեսուրսները՝ կազմելով համապատասխանաբար 855.2 և 982.6 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատությամբ մոտ 2 և 3 անգամ ավել: Ռեսուրսներ կուղղվեն թվով 3 ՄՄԿ ՈՒՀ կառուցմանը:
- Լրացուցիչ 62.7 մլն դրամ միջոցներ կուղղվեն ՆՄՄԿ ՈՒՀ-ների մանկավարժական աշխատողների ատեստավորման համակարգի ներդրմանը և հավելավճարների տրամադրմանը, ինչպես նաև 103.9 մլն դրամ կուղղվի մարզերում գործող ՆՄՄԿ ՈՒՀ-ներում սովորողների և մանկավարժական աշխատողների տրանսպորտային ծախսերի փոխհատուցումներին:

ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	**10,955.8**	**15,176.1**	**38.5**
ՄՄԿ որակի ապահովման ծառայություններ	48.6	66.9	37.6
Ուժեղացնել գենդերային հավասարությունը զբաղվածության մեջ որպես տեղական ինքնակառավարման մակարդակ	10.0	-	-100.0
«Թեժ խոհանոց»	10.0	-	-100.0
ՆՄԿ ստացող ուսանողների կրթաթոշակ	269.9	866.9	221.2
ՄՄԿ ստացող ուսանողների կրթաթոշակ	549.5	967.7	76.1
ՆՄԿ գծով ուսանողական նպաստների տրամադրում	2,409.0	2,764.7	14.8
ՄՄԿ գծով ուսանողական նպաստների տրամադրում	6,769.6	7,530.0	11.2
ՆՄՄԿ ՈՒՀ-ների մանկավարժական աշխատողների ատեստավորման համակարգի ներդրում՝ ուղղված մանկավարժական աշխատողների որակի և վարձատրության բարձրացմանը	-	62.7	-
Մարզերում գործող ՆՄՄԿ ՈՒՀ-ների սովորողների և մանկավարժական աշխատողների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	-	103.9	-
Կամավոր ատեստավորման համակարգի ներդրում՝ ուղղված ՆՄՄԿ ՈՒՀ-ներում հանրակրթական առարկաներ դասավանդող մանկավարժական աշխատողների որակի բարձրացմանը	15.2	352.1	2,214.7
2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում ՆՄԿ ստացող ուսանողներին ուսման վարձի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում	4.1	59.3	1,347.7
2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում ՄՄԿ ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում	109.6	402.9	267.7
ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների ՀՀ-ում ՆՄՄԿ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում	6.9	-	-100.0
ՆՄՄԿ ՈՒՀ-ների շենքային պայմանների բարելավում	437.2	855.2	95.6
ՆՄՄԿ ՈՒՀ-ների ուսումնաարտադրական բազայով ապահովում	-	161.1	-
ՆՄՄԿ ՈՒՀ-ների շենքերի կառուցում	316.2	982.6	210.7

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Ծրագրով ծախսերը նախատեսվել են հանրապետության 20+57 ՆՄԿ իրականացնող հաստատություններում արհեստագործական կրթության մեջ ընդգրկված 8,003 սովորողների, 65+76 հաստատություններում միջին մասնագիտական կրթության մեջ ընդգրկված 20,215 սովորողների ուսուցման գծով:
- Կրթաթոշակ կստանան ՆՄԿ ստացող 6,035 և ՄՄԿ ստացող 14,756 սովորող: Նախորդ տարվա համեմատությամբ կրթաթոշակ ստացողների թվաքանակը կաճի համապատասխանաբար 58.5 և 71.1 տոկոսով:
- ՆՄԿ և ՄՄԿ ստացողների միջին ամսական կրթաթոշակը համապատասխանաբար կկազմի 11,971 և 5,465 դրամ՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 101.7 և 2.9 տոկոսով:
- ԼՂ-ից բռնի տեղահանված սովորողների թիվը ՆՄԿ և ՄՄԿ ՈՒՀ-ներում կազմում է համապատասխանաբար 484 և 2,040, իսկ միջին կրթաթոշակները՝ 10,208 և 16,458 դրամ:
- Ընթացիկ տարում ատեստավորմանը կմասնակցեն 264 մանկավարժական աշխատողներ; Ատեստավորում անցած և ընթացիկ տարում դրույքաչափի բարձրացում ունեցած մանկավարժների թիվը կազմում է 49, իսկ նաև հավելավճար ստացողների թիվը՝ 74:

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

20
Պետական ՆՄՈՒՀ-ների թիվ

57
ՆՄԿ իրականացնող պետական ՈՒՀ-ների թիվ





ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

65
Պետական ՆՄՈՒՀ-ների թիվ

76
ՆՄԿ իրականացնող պետական ՈՒՀ-ների թիվ

ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ



1111 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

14.6 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿ

Ապահովել մատչելի, որակյալ և մրցունակ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Գիտելիքների տնտեսության և գիտության զարգացման արդի պահանջներին համապատասխան բարձրագույն և հետբուհական մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների պատրաստում:

- Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի բյուջեն 2024 թվականին կաճի 15.1 տոկոսով և կկազմի ավելի քան 14.6 մլրդ դրամ:
- Ծրագրի բյուջեի 79.5 և 11.4 տոկոսը համապատասխանաբար կուղղվի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստացողների նպաստների և կրթաթոշակների տրամադրմանը: Նախորդ տարվա համեմատությամբ այս ծախսերը կաճեն մոտ 39 և 12 տոկոսով:
- 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով տրամադրվող կրթաթոշակներին կուղղվի 440.2 մլն դրամ:
- Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցմանը կուղղվի 66.3 մլն դրամ, իսկ մարզաբնակ և օտարերկրյա ուսանողների՝ Երևանում կեցության վարձավճարի փոխհատուցմանը՝ 35 մլն դրամ:
- Լրացուցիչ միջոցներ են նախատեսվել պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով (կրթական ծրագրերով) ՀՀ բուհերում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով առկա ուսուցմամբ սովորողներին տրվող պետական կրթաթոշակի չափերի ավելացման համար:
- Լրացուցիչ ռեսուրսներ կուղղվեն նաև «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի և «Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի շինարարական աշխատանքների իրականացման համար:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Նախնական մակարդակ	2024
8	9

Սոցիալական աջակցությունից օգտվող ուսանողների մասնաբաժինը կրթություն ստացողների մեջ, տոկոս

Նախնական մակարդակ	2024
60	70

Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բարձրագույն կրթությամբ մրցունակ շրջանավարտներ, որոնք կաշխատեն ըստ մասնագիտության, տոկոս

- Ծրագրով ծախսերը նախատեսված են ավելի քան 12.5 հազար բարձրագույն և հետբուհական կրթություն ստացող ուսանողների, մարտական գործողություններին մասնակցած ուսանողների, երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողների ուսման վճարի մասնակի փոխհատուցման համար:
- Բարձրագույն և հետբուհական կրթության նպաստ կստանան համապատաս-խանաբար 11,732 և 1,168 ուսանող:
- 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո ԼՂ-ից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն կրթական ծրագրով ուսման փոխհատուցում ստացող ուսանողների թվաքանակը 2,190 է:
- Բարձրագույն և հետբուհական կրթության կրթաթոշակ կստանան համապատաս-խանաբար 11,884-ը և 827-ը: Բարձրագույն կրթություն ստացողների միջին կենսաթոշակը կկազմի 7,447 ՀՀ դրամ, իսկ հետբուհական կրթություն ստացողների դեպքում՝ 61,446 ՀՀ դրամ:
- Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում կստանան 23,812 շահառուներ: Հանրակացարանում բնակվող ուսանողների թիվը 240 է:

ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ	**12,725.4**	**14,642.3**	**15.1**
Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ	43.1	43.1	-
Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ	60.0	60.0	-
Ռազմական դրությամբ պայմանավորված բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողների ուսման վարձի փոխհատուցում	15.4	-	-
Բուհի տարածքում տեղակայված պետական մարմինների բնականոն գործունեության ապահովում	2.9	-	-
Հայ-ռուսական գիտակրթական ֆորումի անցկացում	22.7	-	-
ԲՄԿ ստացող ուսանողների կրթաթոշակ	741.2	1,062.0	43.3
Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում	406.3	520.7	28.2
Ասպիրանտական կրթաթոշակներ գիտական հաստատություններում սովորողներին	55.3	89.0	61.1
ԲՄԿ գծով ուսանողական նպաստների տրամադրում	9,902.5	11,096.5	12.1
Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում	464.9	502.8	8.2
Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում	20.5	35.6	73.9
Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին, կեցության վարձավճարի փոխհատուցում մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներին	35.0	35.0	-
Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում	74.2	66.3	-10.6
2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո ԼՂ-ից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում	439.3	440.2	0.2
ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում	254.2	-	-
Բարձրագույն ուսումնական հաստատությունների և «Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի շենքային պայմանների բարելավում	137.9	691.0	401.2
Բարձրագույն ուսումնական հաստատությունների և «Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի նյութատեխնիկական բազայի համալրում և գույքով ապահովում	50.0	-	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԹԻՎ



ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ, ՀՀ ԴՐԱՄ



ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԻՎ



1162 ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

35.8 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿ

- **Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար, կիրառական և թեմատիկ հետազոտությունների իրականացում, ենթակառուցվածքի և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում և զարգացում, գիտական ներուժի վերարտադրության ապահովում:**

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

- **Գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների հետազոտությունների իրականացում, գիտական ներուժի զարգացում, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում:**

- Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի բյուջեն 2024 թվականին կաճի 57.8 տոկոսով և կկազմի մոտ 35.8 մլրդ դրամ:
- Ծրագրի բյուջեի 38.5 տոկոսը կամ մոտ 13.8 մլրդ դրամ կուղղվի գիտական ենթակառուցվածքի արդիականացմանը: Այս միջոցները նախորդ տարվա համեմատությամբ կաճեն 15.1 տոկոսով:
- Ծրագրային հաջորդ խոշոր ուղղությունը գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացումն է: Մասնավորապես՝ գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններին կուղղվի 9.3 մլրդ դրամ (ծրագրի բյուջեի 26 տոկոսը), իսկ նպատակային-ծրագրային հետազոտություններին 152.9 մլն դրամ, որոնք նախորդ տարվա համեմատությամբ աճել են համապատասխանաբար՝ 56.7 և 12.4 տոկոսով:



Միջազգային հայտնի գիտատեղեկատվական հեղինակավոր շտեմարաններում հրապարակված գիտական հոդվածների քանակ

Արտերկրի լավագույն գիտական կենտրոններում վերապատրաստում անցած աշխատակիցների քանակ

Միջազգային համագործակցության շրջանակներում համատեղ ծրագրերի և միջազգային դրամաշնորհների մասնակցության քանակ



Արտերկրի առաջատար կենտրոններում աշխատող գիտնականների ղեկավարությամբ մրցունակ գիտական ստորաբաժանումների քանակ

- 2024-ին կիրականացվեն 802 պայմանագրային/թեմատիկ հետազոտություններ, որոնց կմասնակցեն 1,398 կին հետազոտողներ: Հետազոտական խմբերի միջին թվաքանակը կազմում է 4.4 մարդ:
- Գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային հետազոտություններն իրականացվում են թվով 6 կազմակերպությունների կողմից: 2024-ին կիրականացվեն 8 հետազոտություններ, որոնց կմասնակցեն 35 կին հետազոտողներ: Հետազոտական խմբերի միջին թվաքանակը կկազմի 12 մարդ:
- Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսված ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության, բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացման, արագացուցչային տեխնոլոգիաների զարգացման, անտենային էտալոնների պահպանման և զարգացման, գիտական գրադարանային ծառայությունների ապահովման ուղղություններով:

ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	**22,664.8**	**35,776.0**	**57.8**
Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ	262.0	409.0	56.1
Գիտական ենթակառուցվածքի արդիականացում	11,981.7	13,788.3	15.1
Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն	908.2	940.3	3.5
Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	5,932.3	9,295.7	56.7
Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ	136.0	152.9	12.4
Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում	-	95.6	-
Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում	870.1	948.5	9.0
Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում	228.6	244.3	6.9
Անտենային էտալոնների պահպանում և զարգացում	45.0	45.0	0.0
Գիտական գրադարանային ծառայություններ	128.3	150.6	17.4
Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ	157.4	-	-100.0
ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորում և զարգացում	-	173.0	-
Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	769.4	842.0	9.4
ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրում	139.2	112.2	-19.4
ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	-	4.5	-
Գիտական կենտրոնների վերանորոգում, «Ակադեմիական քաղաք» նախագծի իրականացման շրջանակներում առաջացած հրատապ ծախսերի ապահովում	86.2	940.0	990.4
Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծում	940.7	4,200.0	346.5
Արհեստական բանականության գիտահետազոտական կենտրոնի արդիականացում	-	3,434.0	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Գիտական կենտրոնների վերանորոգում, «Ակադեմիական քաղաք» նախագծի իրականացման շրջանակներում առաջացած հրատապ ծախսերի ապահովմանը կուղղվի 940.0 մլն դրամ:
- Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինմանը և համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծմանը կուղղվի 4.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 940.7 մլն դրամի դիմաց:
- Կմեկնարկեն ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորում և զարգացում, ինչպես նաև Արհեստական բանականության գիտահետազոտական կենտրոնի արդիականացում միջոցառումները, որոնց նախատեսված է ուղղել համապատասխանաբար 173.0 մլն և 3.4 մլրդ դրամ:
- Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակումներին կուղղվի 95.6 մլն դրամ:
- Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար հավելավճարների և ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրման ապահովման համար նախատեսված է համապատասխանաբար 842.0 և 112.2 մլն դրամ:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

6
Գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրեր իրականացնող կազմակերպություններ

8
Նպատակային-ծրագրային հետազոտությունների թվաքանակ

35
Հետազոտություններում ներգրավված կանանց թվաքանակ

12
Հետազոտական խմբերի միջին թվաքանակ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

802 Թեմաների թիվ	**1,398** Ներգրավված կանանց թվաքանակ	**15** Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված թեմաների թիվ	**4.4** Հետազոտական խմբերի միջին թվաքանակ	**800** Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում հրապարակված գիտական հոդվածների քանակ
10 Պետության կարիքներից բխող հետազոտական նախագծերի քանակ	**10** Ռազմարդյունաբերության կարիքներից բխող երկակի հետազոտական նախագծերի քանակ	**86** Արտերկրի առաջատար կենտրոններում աշխատող գիտնականների ղեկավարությամբ կամ համագործակցությամբ մրցունակ գիտական ստորաբաժանումների քանակ	**45** Միջազգային գիտական ծրագրերի թիվ	**28** Միջազգային գիտական ծրագրերում ներգրավված կանանց թվաքանակ

Տնտեսական զարգացման և
հետազոտությունների կենտրոն (EDRC)
+374(0) 55 540 289
info@edrc.am
www.edrc.am